Հուլիսի 19-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 16 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի «Երևանի մանկան տուն» ՊՈԱԿ-ի մասնաշենքերի գազաֆիկացման և ջեռուցման վերակառուցում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Խաչմաչ գյուղի համայնքային կենտրոնի կառուցման նախագծի փորձաքննություն» և «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի մանկատան տարածքի բարեկարգում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Տպարանի շենքի տանիքի նորագման, օդափոխության, հովացման և ջեռուցման համակարգերի փոփոխման նախագծային աշխատանքների կազմակերպում» և «Կրոնական գրքերի տպագրության համար թղթի գնում» ծրագրերը.

«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Արյան անվտանգության ազգային ծրագրի շրջանակներում միջոցառումների իրականացմանը նպաստող» ենթադրամշնորհային ծրագրի և «Գերակայող հիվանդությունների (ՏԲ-ի) բուժման համար նախատեսված դեղերի ռացիոնալ կիրառմանը նպաստող» ենթադրամշնորհային ծրագրի» ծրագրերը.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանարպետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակի հետազոտություն, ախտորոշում և բուժում» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Ազատության փողոցի անցուղու վերանորոգում», «Հայ առաքելական սուրբ եկեղեցու կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների վեցօրյա վերապատրաստում» և «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի և Գորիսի տարածաշրջանների համայնքների երեխաների համար ամառային ճամբարի կազմակերպում» ծրագրերը.

«Առդա» բարեգործական հիմնադարմի կողմից իրականացվող «Վանաձորի «Տարոն-3» թաղամասում երկու կիսակառույց շենքերը բնակարանների վերակառուցելու նախագծում» ծրագիրը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադարմի կողմից իրականացվող «Բնակելի տան կառուցում» և «Տանիքի վերանորոգում» ծրագրերը.

«Յանգ Լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագիրը.

Ամերիկայի հայ օգնության ֆոնդի հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մուտքի և հանգստի սենյակի վերանորոգում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: